



FAÇADE EXTÉRIEURE - COLLÈGE ARMÉNIEN - VENISE

ԱՐՏՈՒԹՅՈՒՆ - ՄԱՐԿԱՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ - ՎԵՆԵՑԻԱ

ՀԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-7

IAE PUBLICATION • ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
YEREVAN 2025 ЕРЕВАН

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA*

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյոթ Թրափինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնասպետյան, Պիլոեր Քաուփ

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլյուսի Երոտական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12-13-ին ՀԱԻ Սիյուտքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սիյուտքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սիյուտքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ՀՈԴԿԱՃՆԵՐ

I. ՀՀ-ՍՓՅՈՒՌԹ, ՀՀ-ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՒ ՓՈԽԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուբեն Կարապետյան

Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաժին Վարդանյան

Մարիամ Հակոբյան

Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք գործակցության բաղադրիչ (ՀՀ – Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան

Մերձատր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերություններ. արդի միտումներ, մարտահրավերներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան

Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում. հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան

Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Սյրեխան Զախարյան

Արևելյան Եւրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան

Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները. իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան

Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները, այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանջյան

Սյուզաննա Բարսեղյան

Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան

«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինև Սվազյան

Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր
մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**Նեղի Խաչատրյան****Մարիամ Հարությունյան**

Կրոնատաժության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան

Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի
կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՉԱՆԱՉԱՆՔ**V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ****Կարեն Ասատրյան**

Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ
(19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան

«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ**Կասիա Արմենյան**

Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ**Տորք Դալայան****Լուսինե Հայրիյան****Անահիտ Խեչոյան**

Études arméniennes contemporaines, 2023, №15.

Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տազևսեան

Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ**Միզան Բոնպեան**

Հայագիտական ամստոնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին.

Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

230

I

ՀՀ–ՍՓՅՈՒՌ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ.
ՓՈԽԿԱՊԵՐ ԵՒ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գայանե Հակոբյան, պ.գ.թ.

ՀԱԻ

ՆՈՐ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՉԱՏՆԵՐԻ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԸ

Ետխորհրդային Հայաստանի բնակչության շարունակական արտագաղթը՝ Հանրապետության առջև ծառացած հիմնախնդիրներից է, որ կարիք ունի խորը և համակողմանի ուսումնասիրության: Հայերի արտագաղթի հարցում կարևոր դեր ունի *միգրացիոն* ցանցը, որն արտերկրում վերածվում է ինչպես *միգրացիայի* վստահության, այնպես էլ սոցիալական փոխհարաբերությունների կարևոր միջոցի: Վերջինիս ձևավորումը շատ կարևոր է ոչ միայն արտագաղթած անձի, այլև Հայաստանում ապրող ընտանիքի անդամների համար, քանզի այն նոր միջավայրում համարվում է *աղսպարացիայի* կարևոր գործոն և սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպման նախապայման: Հոդվածում հայաստանցի հարազատների դիտանկյունից քննարկվում են նոր *միգրանտների*՝ ցանցի ներքում ունեցած հարաբերությունները, Սփյուռքի համայնքային կառույցների հետ կապի հաստատման ու գործառնության հարցերը, և արդյունքում՝ նրանց սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպման առանձնահատկությունները:

Հետազոտությունն իրականացրել ենք 2021–2023 թթ.՝ քանակական և որակական մեթոդաբանությամբ:

Հիմնաբառեր՝ արտագաղթ, հայկական Սփյուռք, նոր *միգրանտներ*, սոցիալ-մշակութային կյանք, քանակական և որակական հետազոտություն:

Ներածություն

Հայաստանի անկախությունից հետո արտերկրում հաստատված հայերին գրականության մեջ բնորոշում են որպես նոր Սփյուռք, որն ունի իր առանձնահատկությունները, այդ թվում՝ սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպման տեսանկյունից: Հոդվածում նպատակ ունենք քննարկելու Հայաստանից արտագաղթած *միգրանտների* նոր խմբերի սոցիալ-մշակութային կյանքը՝ այստեղ բնակվող հարազատների դիտանկյունից: Նպատակի իրականացման համար խնդիր է դրվել բացահայտելու էթնիկ ցանցի առկայությունն արտագաղթի երկրում, արտագաղթածների՝ էթնիկ ցանցի հետ շփման առիթները և համայնքային կյանքին մասնակցության ձևերը: Ուսումնասիրության նյութերը հավաքվել են քանակական և որակական մեթոդների համադրությամբ: Քանակական հետազոտությունն անցկացվել է 2021թ. ՀՀ բոլոր մարզերի 20 քաղաքային, 37 գյուղական բնակավայրերում և Երևան քաղաքում բնակվող 639 ընտանիքներ

րում¹: Թիրախային են համարվել այն տնային տնտեսությունները (SS), որոնք ունեցել են արտագաղթած անդամներ: Որակական վերլուծության համար հիմք են ծառայել 639 SS-ներից ընտրված և 30-ի հետ 2023թ. իրականացված խորին հարցազրույցների արդյունքները: Խորին հարցազրույցներն անցկացվել են ՌԴ, երոպական երկրներ, ԱՄՆ և Կանադա արտագաղթածների ընտանիքի անդամների հետ՝ համապատասխանաբար 15, 9, 6 քանակով:

Արտագաղթի երկրները և էթնիկ ցանցի առկայությունը

Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ 639 ընտանիքներից 1259 հոգի արտագաղթել և մշտական բնակություն է հաստատել արտերկրում: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ի տվյալներից, հայերի համար առաջին նպատակա-կետ երկիրը ՌԴ-ն է, այնուհետև մեծ թիվ են կազմում երոպական երկրներ, ապա՝ ԱՄՆ և Կանադա արտագաղթած հայերը: Որոշակի զանգված են կազմում նաև ԱՊՀ (Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան են) և այլ երկրներ (Վրաստան, Չինաստան, Հնդկաստան են) արտագաղթած ընտանիքները: Երոպական երկրների մեջ 1-ին տեղում է Գերմանիան (33,8%), ապա՝ Ֆրանսիան (22,8%), Իսպանիան (12,5%), Բելգիան (5,9%), Հունաստանը (5,9%), Լեհաստանը (5,2%), Նիդեռլանդները, Շվեյցարիան, Մեծ Բրիտանիան են [աղ. 1]:

Աղյուսակ 1.
Արտագաղթի երկիրը (%)

Երկիրը	%
ՌԴ	61,0
Եվրոպական երկրներ	21,0
ԱՄՆ և Կանադա	10,0
ԱՊՀ երկրներ	4,5
այլ երկրներ	3,5
ընդամենը	100,0

Ետխորհրդային շրջանում Հայաստանից արտագաղթածների գերակշիռ մասը՝ 88,6 %-ը արտերկրում ունի հայերից բաղկացած սոցիալական մերձ միջավայր՝ բարեկամ, ընկեր, հարևան, որոնց հետ շփվում է: Այդ ցուցանիշն ամենաբարձրը Ռուսաստանում է՝ 93,8 %, ապա՝ ԱՊՀ երկրներում՝ 88,5 %, իսկ համեմատաբար ամենացածրը երոպական երկրներում է՝ 77,2 %: Ընդունող երկրում էթնիկ ցանցի առկայության կամ բացակայության հանգամանքն էական դեր ունի ինչպես հենց արտագաղթողի, այնպես էլ վերջինիս ընտանիքի անդամների համար՝ ավելի լավ պատկերացում կազմելու օտար երկրում իրենց հարազատի *աղասպրացիա*ի խնդիրների և անցկացրած սոցիալ-մշակութային կյանքի մասին [աղ. 2]:

1 Քանակական հետազոտությունն արվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ 20TTSH.040 ծածկագրով «Հետխորհրդային Հայաստանի բնակչության արտագաղթի հիմնախնդիրը Սփյուռքի էթնիկ ցանցի համատեքստում» գիտական թեմայի շրջանակում:

Աղյուսակ 2.
Էթնիկ ցանցի առկայությունն արտագաղթի երկրում (%)

Երկիրը	այո	ոչ	դժվ. է պատ.	ընդամենը
ՌԴ	93,8	4,9	1,3	100,0
ԱՊՀ երկրներ	88,5	7,7	3,8	100,0
Եվրոպական երկրներ	77,2	16,9	5,9	100,0
ԱՄՆ և Կանադա	82,8	14,1	3,1	100,0
այլ երկրներ	82,6	17,4	0,0	100,0
ընդհանուր	88,6	8,9	2,5	100,0

Էթնիկ ցանցի հետ շփման առիթները

Արտերկրում բնակվող *միգրանտների* համար «հայրենիքի կարոտն առնելու», «պատկանելության զգացում» ունենալու, մշակութային ինքնության պահպանման և վերադարձի մասին ու այն երեխաներին փոխանցելու համար կարևոր գործոն է նրանց ակտիվ սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպումը²։ Թերևս այս նպատակին է միտված հայ *միգրանտների* այն վարքագիծը, որ գրեթե ամեն երրորդ ընտանիք՝ 35,9 %-ը, հայ ավանդական տոները՝ Նոր Տարին, Սուրբ Ծնունդը, Զատիկը ևն, նշում է հարազատի, ընկերոջ, համերկրացու հետ։ Ընդ որում, այս *սրբակրիկյացի* մասին ավելի շատ նշել են ԱՊՀ երկրներ, ապա Եվրոպա և ԱՄՆ արտագաղթած հայերի հարազատները (համապատասխանաբար՝ 47,8 %, 41,9 %, 41,5 %) [աղ. 3]։ Ռուսաստանի դեպքում արձանագրվել է միջինից ցածր ցուցանիշ՝ 33,9 %։ Իսկ այլ երկրներում այս առիթով շփումները, ըստ հարցվողների, սահմանափակ են. սա կարող է պայմանավորված լինել հայերի սակավ քանակով, նրանց՝ տարբեր երկրներում ցրվել բնակությամբ և շատ մոտ միջավայրի բացակայությամբ, ինչն էլ չի նպաստում ցանցի ներսում ավելի մտերիմ հարաբերությունների ձևավորմանը [աղ. 3]։

Ըստ հարցվողների՝ արտերկրում բնակվող իրենց հարազատների շրջանում տարածված է նաև ընտանեկան միջոցառումները՝ հարսանիքները, ծննդյան տոները, մկրտության ծեսերը Էթնիկ ցանցի մասնակցությամբ նշելու *սրբակրիկյան*։ Քանակական տվյալների համաձայն՝ նրանք կազմում են ընդհանուրի 48,1 %-ը, իսկ եթե դիտարկենք ըստ երկրների, ապա այս *սրբակրիկյան* ավելի շատ տարածված է Ռուսաստանում և եվրոպական երկրներում և ավելի քիչ՝ այլ երկրներում ապրող հայերի մեջ (համապատասխանաբար՝ 50,0 %, 50,5 %, 10,5 %) [աղ. 3]։ Խորին հարցազրույցի մասնակիցների մեծ մասի համար ևս Էթնիկ ցանցի անդամների և արտագաղթողի միջև հարաբերությունների բնութագրական կողմ է համարվում տոն օրերը միասին նշելը։ Արտերկրում ավանդույթների պահպանման մասին է վկայում երեկոյթների կազմակերպումը տոներին՝ հենց այնպես, ինչպես դա արել են Հայաստանում։ Փաստորեն, արտագաղթի երկրում ընտանեկան միջոցառումները և տոները միասին նշելու հնարավորությունը նոր *միգրանտների* համար ապահովում է Էթնիկ ցանցը,

² Mata-Codesal et al. 2015, 3–4.

Աղյուսակ 3.
Ցանցի հետ շփման առիթները՝ ըստ արտագաղթի երկրի (%)
(«այո» պատասխանները)

առիթները	ընդհանուր	արտագաղթի երկիրը				
		Ռուսաստան	ԱՊՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	այլ երկրներ
տոներին	35,9	33,9	47,8	41,9	41,5	10,5
ընտանեկան միջոցառումներին	48,1	50,0	43,5	50,5	45,3	10,5
առօրյա շփում	20,1	23,0	21,7	11,4	15,1	26,3
գործնական շփում	18,6	21,9	8,7	11,4	11,3	26,3
համայնքային միջոցառումներին	3,5	1,4	8,7	10,5	1,9	5,3
եկեղեցական արարողություններին	1,4	0,5	0,0	1,9	7,5	0,0
չեն շփում	3,2	3,0	4,3	2,9	3,8	5,3
դժվարանում են պատասխանել	7,1	6,3	8,7	5,7	11,3	15,8

որում, ըստ հետազոտվողների, արտագաղթած անդամը կարող է գտնել հարագատ միջավայրի մշակութային տարրերը՝ զգալով սեփական «ես»-ի պատկանելությունը արտաքին միջավայրին: Եւ պատահական չէ նաև, որ հետազոտության մասնակիցներից շատերն էթնիկ ցանցի առկայությունն ընդունող երկրում համարում են կարևոր պայման՝ իրենց հարագատի անձի ամբողջականության, լիարժեքության համար:

Ըստ հարցվողների՝ իրենց հարագատների սոցիալական կյանքի բաղկացուցիչ մասն են կազմում նաև ամենօրյա շփումները ցանցի ներսում, որոնք, ի համեմատ Ռուսաստանի, երոպական երկրներում և ԱՄՆ-ում ապրող հայերին ավելի քիչ չափով են բնորոշ [աղ.3]: Վերջիններիս դեպքում կարող ենք ասել, որ հիմնական պատճառներից մեկը հայերի ցրվլ բնակությունն է: Սակայն եթե խոսքը Կալիֆորնիային է վերաբերվում, որտեղ հայկական հոծ զանգված կա, շատ հայեր գրեթե նույն կենսակերպով են ապրում, ինչ Հայաստանում: Ռուսաստանի պարագայում հայկական բնակավայրերն ավելի շատ են՝ Մոսկվայի մարզ, Ռոստով, Ռոստովի մարզ, Կրասնոդար, Կրասնոդարի մարզ են: Հետևաբար, այստեղ ապրող հայերի՝ առօրյա շփումների հնարավորություններն ավելի են մեծանում: Խորին հարցազրույցի մասնակիցները ևս նշում են, որ ընդունող երկրում բնակվող էթնիկ ցանցը, որը նպաստել է նաև իրենց ընտանիքի անդամի արտագաղթին, հիմնականում բարեկամական հարաբերություններ է ձևավորել արտագաղթողի հետ: Այդ կապվածությունը հաճախ դրսևորվում է հարաբերությունների խորացմամբ և ամենօրյա հանդիպումներով:

Բացի ամենօրյա շփումներից, հետազոտության մասնակիցները նշում են նաև ցանցի հետ՝ արտագաղթած հարազատների գործնական փոխհարաբերությունների մասին՝ իրենց խոսքում հաճախ շեշտելով հայ համայնքի օգնող գործառույթի մասին: Ըստ նրանց՝ փոխօգնությունը համարվում է առկա հարաբերությունների կարևոր բնութագրիչ: Քանակական հետազոտության արդյունքները ևս բացահայտում են ցանցի ներսում գործնական բնույթի շփումների մասին: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ի տվյալներից, այդ ցուցանիշն ամենաբարձրն՝ այլ երկրներում (26,3 %), և ամենացածրն՝ ԱՊՀ երկրներում բնակվող հայերի պարագայում է (8,7 %) [աղ. 3]:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ինչքան մեծ է արտերկրում բնակվելու տարիների թիվը, այնքան ցանցի ներսում շփումներն ավելի հաճախակի և մտերմիկ են դառնում, այնքան մշակութային ինքնության պահպանման հրամայականն արդիական է դառնում: Օրինակ՝ տոները միասին նշելու *սրբակրիկան* ավելի շատ տարածված է վաղ մեկնածների, քան վերջին 7–8 տարիներին արտագաղթածների շրջանում: Կամ՝ վերջին 3–4 տարիներին արտագաղթածները, համեմատած այլ տարիների արտագաղթածների, էթնիկ ցանցի հետ ավելի շատ գործնական հարաբերություններ ունեն: Այստեղ կարող ենք նշել, որ մշակութային ինքնության պահպանումն ու վերարտադրումը հնարավոր են դառնում նաև էթնիկ ցանցի անդամների՝ հայրենիքը վերապրելու և պատկանելության զգացում ունենալու շարունակական ցանկության դեպքում³:

Երբ անձը հայտնվում է այլ սոցիալ-մշակութային միջավայրում, հաստատուն ու կայուն թվացող մշակութային կոդերը սկսում են կասկածի ու անորոշության տեղիք տալ, և, կարելի է ասել, արտերկրում *միգրանտի* «ինքնությունը հայտնվում է ճգնաժամի մեջ»⁴: Հետևաբար, այլ երկրում ձևավորվող համայնքի համար «մենք»-ի և «ուրիշներ»-ի պատկերացումների վերիմաստավորման գործընթաց է սկսվում⁵: Այս ամենը բնորոշ է նաև Հայաստանից արտագաղթողներին: Եւ քանակական ցուցանիշներն էլ վկայում են այն մասին, որ մշակութային ինքնության պահպանման և վերարտադրման համար կարևոր խթան են դառնում արտերկրում սեփական համայնքի հետ կապ հաստատելը, համայնքային միջոցառումներին (ավելի շատ տարածված է Եւրոպայում՝ 10,5 %) և եկեղեցական արարողություններին (ավելի շատ տարածված է ԱՄՆ-ում՝ 7,5 %) մասնակցելը: Սակայն պետք է նշել նաև, որ այս առիթով շփումները քիչ են շփման ընդհանուր ձևերի մեջ, և շատ հայեր էթնիկ ցանցի անդամների հետ ունեն ավելի սերտ և ընտանեկան փոխհարաբերություններ:

Նոր միգրանտների առնչությունը հայ համայնքի կյանքին

Արտերկրում հայերի սոցիալական կյանքի կազմակերպման մեջ մեծ դեր ունեն համայնքային կառույցները, որոնք տարաբնույթ սոցիալական և

³ Wenjing 2005, 395–396.

⁴ Mercer 1990, 20–24.

⁵ Wenjing 2005, 395–397.

մշակութային միջոցառումներ են կազմակերպում՝ այդպիսով հայերին համախմբելով մեկ նպատակի շուրջ: Չնայած համայնքային կառույցների կատարած կարևոր գործառնություններին, հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արտագաղթածների՝ համայնքային որևէ կազմակերպությանն անդամակցելու ցուցանիշը չի գերազանցել 6,3 %-ը: Այն համեմատաբար բարձր է ԱՄՆ-ում / Կանադայում (9,7 %) և այլ երկրներում (9,5 %): Եւրոպական երկրներում կազմում է 6,6 %, ամենացածրը ՌԴ-ում է՝ 5,3 % [աղ. 4]:

Աղյուսակ 4.

Հայ համայնքի հետ առնչության ձևերը՝ ըստ արտագաղթի երկրի (%)

առնչության ձևերը	ընդհանուր	արտագաղթի երկիրը				
		Ռուսաստան	ԱՊՀ երկրներ	եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	այլ երկրներ
համայնքային կազմակերպություններին անդամակցություն	6,3	5,3	8,7	6,6	9,7	9,5
երեխաների՝ կիրակնօրյա դպրոցի հաճախում	8,9	7,2	8,7	9,8	16,1	14,3
մասնակցություն հայ համայնքի կազմակերպած ակցիաներին, ցույցերին	21,3	17,0	8,7	29,5	37,1	19,0

Այս ցուցանիշներից կարող ենք եզրակացնել, որ նոր միգրանտների անդամակցությունն ավանդական Սփյուռքի կառույցներին թույլ է. սա կապված է վերջիններիս պահպանողական գործունեության, միգրանտների՝ համայնքային կյանքի մասնակցության փորձի պակասի, ինչպես նաև իրենց սոցիալական ցանցերում մնալու հանգամանքի հետ, ինչը հանգեցնում է նրանց մեջ խմբային, երբեմն նաև անհատականացված գործելաոճի: Ամերիկյան և եւրոպական երկրների պարագայում նաև ավանդական Սփյուռքի և նոր արտագաղթածների արժեքային և աշխարհայացքային տարբերությունն է պատճառը, որ վերջիններս չեն ինտեգրվում սփյուռքյան համայնքային կազմակերպություններին:

Սակայն ուշագրավ է, որ ըստ մեր որակական նյութերի՝ համայնքային կյանքում առավել ակտիվ ներգրավված են այն արտագաղթողները, որոնք ի սկզբանե ընդունող երկրում չեն ունեցել էթնիկ ցանց: Ընդ որում, ավելի հաճախ է նկատվում այն միտումը, որ եւրոպական երկրներ մշտական բնակության մեկնած նոր միգրանտներն ավանդական համայնքային կառույցներին ինտեգրվելու անմիջական փորձեր են կատարում:

Համայնքային կազմակերպություններին ֆորմալ անդամակցելու ցուցանիշը, ինչպես նշեցինք, ամենացածրը Ռուսաստանում է [աղ. 4], որտեղ համայնքային կառույցները չունեն հարուստ պատմություն և ձևավորվել են վերջին 30 տարիների ընթացքում (օրինակ՝ Ռուսաստանի հայերի միությունը): Ռուսաստանի հայությունը կանգնեց համայնքային միավորներ ձևավորելու ան-

հրաժեշտության առաջ միայն ԽՍՀՄ փլուզումից հետո՝ այն պարզ պատճառով, որ խորհրդային շրջանում Ռուսաստանի հայությունն իրեն Սփյուռք չէր ընկալում, քանզի հայության հայրենաբնակ հատվածի հետ միասին համարվում էր մեկ պետության՝ ԽՍՀՄ քաղաքացի⁶։ Համայնքային *ինստիտուտների* ձևավորումը ՌԴ-ում ընթացավ հայաշատ բնակավայրերում համայնքային մարմինների ստեղծման ճանապարհով։ Այսօր, սակայն, հայերը Ռուսաստանը մոտ են ընկալում մշակութային ընդհանրությունների տեսանկյունից, ինչի հետևանքով համայնքային կազմակերպություններին անդամակցելու և դրանց առաքելությանը հետևելու հարցը խիստ դժվար չէ։ Համայնքային կառույցների՝ ինքնության պահպանման միջավայրի ձևավորման գործառույթն էլ երկրորդային է դառնում, քանզի այդ պահանջմունքը հայերը բավարարում են հաճախակի Հայաստան այցելելով, ամռան ամիսներին երեխաներին հարազատների մոտ ուղարկելով ևն։

Հայ համայնքն արտերկրում ստանձնում է կարևոր դեր նաև արտագաղթած ընտանիքների երեխաների կրթության կազմակերպման և ինքնության պահպանման հարցերում, ինչը երոպական մի շարք երկրներում և ԱՄՆ-ում իրականացվում է հիմնականում եկեղեցու կամ հանրային, բարեգործական կազմակերպությունների միջոցով։ Հստ հետազոտության արդյունքների՝ *միգրանտների* միայն 8,9 % ընտանիքներում են երեխաները հաճախել/հաճախում կիրակնօրյա դպրոցներ։

Բերված ցածր ցուցանիշները կարող են պայմանավորված լինել Հայաստանից տեղափոխված ընտանիքների երեխաների մի մասի հայերեն իմացության, ինչպես նաև հետագայում կրթություն ստանալու և աշխատանք գտնելու նպատակով օտար լեզվի իմացությանը նախապատվություն տալու հանգամանքներով։ Այդ իրավիճակը կարող է պայմանավորված լինել նաև նոր *միգրանտների* զբաղվածության խնդրով, որոնք ժամանակ չունեն համայնքային կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելու և երեխաների ինքնության պահպանման հարցերով ավելի շատ զբաղվելու։

Եթե ըստ երկրների դիտարկենք հարցը, ապա կտեսնենք գրեթե նույն օրինաչափությունը. կիրակնօրյա դպրոցներ ավելի շատ հաճախում են/հաճախել են ԱՄՆ և Կանադա, ավելի քիչ՝ ՌԴ արտագաղթած ընտանիքների երեխաները [աղ. 4]։ ԱՄՆ-ում առկա է կրթական հաստատությունների բավական լավ ցանց, և 16,1 % ընտանիքներից երեխաները հաճախել են կիրակնօրյա դպրոցներ, որտեղ սովորել են մայրենի լեզու, հայոց պատմություն, գրականություն, երգ ու պար ևն։ Երոպական որոշ երկրներում նույնպես ակտիվ են կիրակնօրյա դպրոցները, որոնց նկատմամբ, ըստ քանակական հետազոտության տվյալների, հետաքրքրություն ցուցաբերել են 9,8 % ընտանիքները։ Այստեղ հայապահպանությունը կարևոր դիրքերում է՝ հաշվի առնելով նաև համայնքային կազմակերպությունների, եկեղեցու ակտիվությունը, եկեղեցուն կից տարբեր դպրոցների և խմբակների առկայությունը։

⁶ Арутюнян 2011, 154.

ՌԴ-ում, բացի հանրակրթական որոշ դպրոցներում դասավանդվող հայերենից, կիրակնօրյա դպրոցների տրամադրած գիտելիքներից օգտվել են 7,2% ընտանիքների երեխաները: Այստեղ կրկին խոչընդոտ կարող է դառնալ ընտանիքի գործոնը՝ ծնողների ծանրաբեռնված աշխատանք, սոցիալ-տնտեսական խնդիրներ ևն:

Նոր արտագաղթածների մասնակցությունը համայնքային սոցիալական կյանքին հատկապես բարձր է *կոլեկտիվ* գործողությունների, օրինակ՝ հայ համայնքի կազմակերպած ցույցերի ու ակցիաների պարագայում: Ըստ հայաստանաբնակ հարազատների դիտարկման՝ արտագաղթածների մեջ ամեն հինգերորդը՝ 21,3 %-ը [աղ. 4], մասնակցում է համայնքային կառույցների կազմակերպած զանգվածային միջոցառումներին՝ դրանով իսկ մաս կազմելով համայնքի սոցիալական կյանքին: Այս մասնակցությունը հատկապես բարձր է Հայոց Ցեղասպանության զոհերի ոգեկոչման և Արցախին նվիրված միջոցառումներին: Այս առումով ավելի ակտիվ են ԱՄՆ և երոպական երկրներ արտագաղթած հայերը, քան՝ ՌԴ (համապատասխանաբար՝ 37,1%, 29,5% և 17,0%): Նման վարքագծով նրանք ամրագրում են հայ համայնքին իրենց պատկանելությունը, որի կարևոր բնութագրիչներից է համարվում մշակույթի և հավաքական գործողության ընդհանրության զգացումը⁷:

Եզրահանգումներ

Ամփոփելով կարող ենք ասել, որ ըստ Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների՝ մշտական բնակության մեկնած իրենց հարազատների համար շատ կարևոր է արտերկրում ակտիվ սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպումը, որում մեծ նշանակություն ունի էթնիկ ցանցը: Այն՝ ինչպես արտերկիր մեկնած անձի, այնպես էլ նրա՝ Հայաստանում ապրող ընտանիքի անդամների համար ոչ միայն կարող է համարվել արտագաղթը պայմանավորող և *ադապտացիայի* կարևոր գործոն, այլև՝ համատեղել ընտանեկան, մշակութային, սոցիալական հարթություններում առկա հարաբերությունները՝ վերածվելով սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպման կարևոր գործոնի:

Միգրացիայի հետևանքով միանգամայն փոխվում է *սոբյեկտի* կյանքը, և դրան հաղորդակից է լինում նաև Հայաստանում ապրող նրա ընտանիքը: Վերջինս զգայուն է արտագաղթած հարազատի ինքնության կրած փոփոխությունների հանդեպ: Այդ իսկ պատճառով՝ հետազոտության մասնակիցներն էթնիկ ցանցի հետ հարաբերություններում կարևորել են նաև հայ ինքնության պահպանման և փոխանցման հարցերը՝ միաժամանակ վստահ լինելով, որ ցանցի միջև շփումները նպաստում են ազգային մշակույթի պահպանմանն ու սովորույթների վերարտադրմանը: Այն, որ իրենց ընտանիքի արտագաղթած անդամը տոն օրերը կարող է նշել տեղի հայերի հետ, ինչպես նաև հայերի միջև փոխօգնության առկայությունը՝ արտագաղթողի ընտանիքի անդամների համար մեծ կարևորություն ունեն:

⁷ Silk 1999, 5–10.

Հետազոտության մասնակիցներից շատերն իրենց հարազատ անձի ամբողջականության, լիարժեքության համար կարևոր պայման են համարում նաև արտագաղթի երկրում հայ համայնքի ներկայությունը, որը նպաստում է օտար միջավայրում միայնակության և անապահովության զգացումների հաղթահարմանը: Սակայն կարող ենք ասել, որ նոր Միլիոնքի և ավանդական համայնքային կազմակերպությունների միջև գործակցությունը սահմանափակ է: Եւ քանակական ցուցանիշներն էլ վկայում են, որ համայնքային կառույցներին անդամակցության, երեխաների՝ կիրակնօրյա դպրոցներ հաճախելու հարցերում առկա են թույլ հարաբերություններ: Համագործակցության համեմատաբար բարձր ցուցանիշներ արձանագրվել են համայնքային զանգվածային միջոցառումներին մասնակցության դեպքում, սակայն դրանք ունեն հատվածային բնույթ և պայմանավորված են ընդունող երկրի գործոնով:

Հապավումներ

SS տնային տնտեսություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵԳԱՆՅԱՆ 2020

Եգանյան Գ.Կ., Միգրացիոն իրավիճակը և բնակչության տեղաշարժերի կառավարման ռազմավարությունները ՀՀ-ում // Բանբեր Երևանի համալսարանի (տնտեսագիտություն), 2020, № 3/33, 52–66:

АРУТЮНЯН 2011

Арутюнян Ю.В., Об Армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Ереван, «Гитутюн», 2011, 154 с.

MATA-CODESAL et al., 2015

Mata-Codesal D., Peperkamp E., Tiesler N., Migration, Migrants and Leisure: Meaningful Leisure // Leisure Studies, 2015, Vol. 34/1, 1–4.

MERCER 1990

Mercer C., Identity Crisis // *Australian Left Review*, 1990, № 1/119, 20–25.

SILK 1999

Silk J., The Dynamics of Community, Place and Identity // *Environment and Planning A: Economy and Space*, 1999, Vol. 31, 5–17.

WENJING 2005

Wenjing X., Virtual Space, Real Identity: Exploring Cultural Identity of Chinese Diaspora in Virtual Community // *Telematics and Informatics*, 2005, Vol. 22/4, 395–404.

Gayane L. Hakobyan, Ph.D.

Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

SOCIAL-CULTURAL LIFE OF NEW MIGRANTS IN THE DIASPORA: THE VIEWPOINT OF RELATIVES IN ARMENIA

Keywords: emigration, Armenian Diaspora, new migrants, social-cultural life, quantitative and qualitative research.

According to the estimates of experts dealing with migration issues, the size of the negative balance of external migration from RA was around 1600–1700 thousand people in 1988–2019. A negative balance of border crossings was recorded also in 2020–2022: 6951 people. Most of these movements from the Republic of Armenia (RA) have been directed primarily towards the Russian Federation, followed by European countries, the USA, Canada, CIS countries, etc.

The purpose of the article is to discuss the social-cultural life of the new groups of migrants who emigrated from the RA from the point of view of relatives living in Armenia. This study is unique in terms of methodology because the object of research is families in the RA, some of whose members emigrated and settled abroad after the 1990s, and the subject is the emigrant members. Research materials were collected using a combination of quantitative and qualitative survey methods. The quantitative research was conducted among 639 families in 20 urban and 37 rural settlements of all RA regions and Yerevan in 2021. Qualitative analysis was based on the results of in-depth interviews conducted (in 2023) with 30 households selected from 639 households.

Based on the results of our study, we can conclude that according to the family members living in the RA, it is essential for their relatives who have left for permanent residence to organize their active social-cultural life abroad, in which the ethnic network is of great importance. It not only becomes an important means of adaptation for new migrants but also becomes an important factor in the organization of their social-cultural life in the new environment. Contacts among the Armenians within a close social environment also contribute to the preservation of culture and the reproduction of customs.

Гаяне Левоновна Акопян, к.и.н.

Институт археологии и этнографии, НАН РА

СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНАЯ ЖИЗНЬ НОВЫХ МИГРАНТОВ В ДИАСПОРЕ: ТОЧКА ЗРЕНИЯ РОДСТВЕННИКОВ В АРМЕНИИ

Ключевые слова: эмиграция, армянская диаспора, новые мигранты, социально-культурная жизнь, количественное и качественное исследование.

По оценкам экспертов, занимающихся вопросами миграции, размер отрицательного сальдо внешней миграции из РА в 1988–2019 годах составил около 1600–1700 тысяч человек. В 2020–2022 годах отрицательное сальдо пересечения границы составило 6951 человек. Бо́льшая часть этих перемещений из Республики Армения (РА) осуществляется в Российскую Федерацию, затем в страны Европы, США, Канаду, страны СНГ и т.д.

Цель статьи – обсудить социокультурную жизнь новых групп мигрантов, эмигрировавших из РА, с точки зрения проживающих здесь родственников. Данное исследование является уникальным с точки зрения методологии, поскольку объектом исследования являются те семьи в РА, часть членов которых эмигрировала и обосновалась за рубежом после 1990-х годов, а субъектом являются члены-эмигранты. Материалы исследования собирались с использованием сочетания количественных и качественных методов опроса. Количественное исследование было проведено среди 639 семей, проживающих в 20 городских, 37 сельских населенных пунктах всех регионов РА и в городе Ереване в 2021 году. Качественный анализ основан на результатах глубинных интервью, проведенных (в 2023 году) с 30 домохозяйствами, отобранных из вышеуказанных 639 домохозяйств.

По результатам нашего исследования можно сказать, что, по мнению членов семьи, проживающих в РА, для их родственников, выехавших на постоянное местожительства, очень важно организовать свою активную социокультурную жизнь за границей, при которой этническая сеть имеет большое значение. Она становится не только важным средством адаптации новых мигрантов, но и важным фактором организации их социокультурной жизни в новой среде. Контакты армян в тесной социальной среде также способствуют сохранению культуры и воспроизведению обычаев.

Ներկայացվել է՝ 17.01.2025,
գրախոսվել է՝ 18.03.2025,
ընդունվել է՝ 10.07.2025:

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա

Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Մոսի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

պատմական գիտությունների դոկտոր
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ / ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկեիչ Ստեփան Արթուրի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
 Եւրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի

պատմական գիտությունների դոկտոր
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճեպեճեան Հրայր Վահէի

աստուածաբանության դոկտոր

Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինե Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող

salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի

սոցիալական գիտությունների թեկնածու

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի

Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն

gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող

sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի

պատմական գիտությունների թեկնածու

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային

թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող

poghosyansvetlana26@aspu.am

Սվազյան Վերժինե Գառնիկի

բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,

ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաժին Վարդանի

պատմական գիտությունների թեկնածու

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ

vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող

lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական

գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող

r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan

On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan

Mariam Hakobyan

The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian

Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan

Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan

Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich

Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan

Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan

Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan

Suzanna Barseghyan

Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan

The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian

The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian

Mariam Harutyunyan

Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan

Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan

Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan

The Role of Weekly Newsletter “Hayastan” in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian

Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan

Lusine Hayriyan

Anahit Khechoyan

Études arméniennes contemporaines, 2023, N° 15 :
La presse de langue arméniennes en France et la création d’un espace transnational 200

Antranik Dakessian

Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan

The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян

О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян

Мариам Акопян

Политика идентичности как составляющая сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебеджян

Отношения между армянскими общинами Ближнего Востока и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян

Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре: точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян

Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич

Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян

Социально-культурные особенности армянской общины Варны: ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян

Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше, результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян

Сюзанна Барсегян

Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян

Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры: пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян

Уровень сохранения армянства у американских армян по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян

Мариам Арутюнян

Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян

Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян

Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян

Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян

Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян

Лусине Айриян

Анаит Хечоян

Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян

Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырнялян

40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 221

230

ՀԱՊԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան
ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան
տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան
ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա):

